

## ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

ԱՂՕԹՔ ՊԻՏԱՆԻՔ ԻԻՐԱՔԱՆՉԻԻՐ ԱՆՁԻՆ  
ՀԱԻԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ  
ԱՐԱՐԵԱԼ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ  
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

### Ա

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ,  
Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի.  
անեղ եւ անմահ բնութիւն.  
արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց.  
եւ ողորմեա քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս:

### Բ

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ,  
անբաժանելի լոյս,  
միասնական սուրբ երրորդութիւն եւ մի աստուածութիւն,  
արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի.  
Հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան.  
եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝  
աղօթել քեզ ի հաճոյս  
եւ ընդունիլ ի քէն զխնդրուածս իմ.  
եւ ողորմեա քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս:

## I CONFESS WITH FAITH

Useful prayers for each believer in Christ  
by St. Nerses Shnorhali (the Grace-filled) (1102-1173)  
Catholicos of Armenians

### 1

I confess with faith and worship you,  
Father and Son and Holy Spirit  
Existence without beginning or end,  
Creator of the heavens and mortals and all that exists,  
and have mercy on your creatures  
and also upon me with my many sins.

### 2

I confess with faith and bow before you,  
Light indivisible,  
Holy Trinity united in one Divinity,  
Creator of the light, banisher of darkness,  
dispel from my soul the darkness of ignorance and sin  
and illumine my mind now  
that my prayers to You may be favorably received  
and my supplications answered by You,  
and have mercy on your creatures  
and also upon me with my many sins.

Գ

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ,  
 որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի  
 ի խնդիր մոլորեալ ոչխարին.  
 Մեղայ յերկինս եւ առաջի քո.  
 Ընկալ զիս որպէս զանառակ որդին,  
 եւ զգեցո ինձ զպատմութեանն զառաջին՝  
 զոր մերկացայ մեղօք.  
 եւ ողորմեա քո արարածոց  
 եւ ինձ՝ բազմամեղիս:

Դ

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ,  
 որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ  
 եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ  
 վասն մերոյ փրկութեան՝ խաչեցար եւ թաղեցար  
 եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար փառօք առ Հայր.  
 Մեղայ յերկինս եւ առաջի քո.  
 Յիշեա զիս որպէս զաւազակն՝  
 յորժամ գաս արքայութեամբ քով.  
 եւ ողորմեա քո արարածոց  
 եւ ինձ՝ բազմամեղիս:

Ե

Հոգի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ,  
 որ իջեր ի Յորդանան եւ ի վերնատունն  
 եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին՝  
 Մեղայ յերկինս եւ առաջի քո.  
 Մաքրեա զիս վերստին աստուածային հրով քով՝  
 որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն.  
 եւ ողորմեա քո արարածոց  
 եւ ինձ՝ բազմամեղիս:

3

Heavenly Father, True God,  
 who sent your beloved Son  
 to rescue the lost sheep,  
 I have sinned before heaven and before You.  
 Receive me like the prodigal son  
 and clothe me in my original cloak  
 stripped away by my sins,  
 and have mercy on your creatures  
 and also upon me with my many sins.

4

Son of God, True God,  
 who descending from your Father's side humbled yourself  
 and became incarnate through the holy virgin Mary,  
 who, for our salvation, was crucified and buried,  
 rose from the dead and ascended in glory to the Father,  
 I have sinned before heaven and before you.  
 Remember me, like the repentant robber,  
 when you come with your kingdom,  
 and have mercy on your creatures  
 and also upon me with my many sins.

5

Spirit of God, True God,  
 who descended at the Jordan River and upon the Upper Room,  
 and illumined me through baptism at the holy fount,  
 I have sinned before heaven and before you.  
 Make me clean again with your divine fire,  
 as you did the holy apostles with fiery tongues,  
 and have mercy on your creatures  
 and also upon me with my many sins.

2

Անեղ բնութիւն,  
Մեղայ քեզ մտօք իմովք.  
հոգւով եւ մարմնով իմով.  
Մի յիշեա զմեղս իմ զառաջինս՝  
վասն անուանդ քում սրբոյ.  
եւ ողորմեա քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս:

Է

Տեսող ամենայնի,  
մեղայ քեզ խորհրդով, բանիւ եւ գործով.  
Ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց  
եւ գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց.  
եւ ողորմեա քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս:

Ը

Քննող գաղտնեաց,  
մեղայ քեզ կամայ եւ ակամայ,  
գիտութեամբ եւ անգիտութեամբ.  
Թողութիւն շնորհեա մեղաւորիս.  
Զի ի ծննդենէ սուրբ աւազանին  
մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո,  
զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս.  
եւ ողորմեա քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս:

6

Uncreated existence,  
I have sinned with my mind, my soul and my body.  
For the sake of your holy name  
do not recall my prior sins,  
and have mercy on your creatures  
and also upon me with my many sins.

7

Seer of all,  
I have sinned against you in thought, word and deed.  
Erase the record of my transgressions,  
and write my name in the book of life,  
and have mercy on your creatures  
and also upon me with my many sins.

8

Examiner of secrets,  
I have sinned against you willingly and unwillingly,  
knowingly and unknowingly.  
Grant forgiveness to me a sinner.  
For from my birth at the holy fount  
to this day, I have sinned before your Divinity  
with my senses and with my body in all its parts,  
and have mercy on your creatures  
and also upon me with my many sins.

Թ

Ամենախնամ Տէր,  
դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ  
ոչ եւս հայիլ յայրատ.  
Եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան.  
Եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն.  
Եւ սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն.  
Եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն.  
Եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան.  
Այլ ուղղեա զշարժումն սոցա  
լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Ժ

Հուր կենդանի Քրիստոս,  
զհուր սիրոյ քո, զոր արկեր յերկիր՝  
բորբոքեա յանձն իմ,  
զի այրեացէ հոգւոյ իմոյ.  
Եւ սրբեացէ զխիղճն մտաց իմոյ.  
Եւ մաքրեացէ զմեղս մարմնոյ իմոյ.  
Եւ վառեացէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԱ

Իմաստութիւն Հօր Յիսուս,  
տուր ինձ զիմաստութիւն,  
զբարիս խորհել եւ խօսել եւ գործել  
առաջի քո յամենայն ժամ.  
Ի չար խորհրդոց՝ ի բանից եւ ի գործոց փրկեա զիս.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

9

All-caring Lord,  
place your holy terror, as a sentinel  
upon my eyes that I should no longer gaze in lust,  
and upon my ears that I should not delight in evil words,  
and upon my mouth that I should not speak lies,  
and upon my heart that I should not think evil,  
and upon my hands that I should not act unjustly,  
and upon my feet that I should not walk the path of iniquity.  
Rather correct their movements  
to follow your commandments always in all things,  
and have mercy upon your creatures  
and upon me with my many sins.

10

Christ, living fire,  
Kindle within me the fire of your love  
which you have cast upon the earth,  
that it may purify my soul,  
and wipe clean the conscience of my mind,  
and cleanse the sins of my body,  
and set my heart aflame with the light of knowing you,  
and have mercy upon your creatures  
and upon me with my many sins.

11

Jesus, wisdom of the Father,  
give me wisdom  
to think and to speak and to do the good  
before you at all times.  
Save me from evil thoughts, words and deeds,  
and have mercy upon your creatures  
and upon me with my many sins.

**ԺԲ**

Կամեցող բարեաց, Տէր կամարար,  
մի թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ.  
այլ առաջնորդեա ինձ  
լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

**ԺԳ**

Արքայ երկնաւոր,  
տուր ինձ զարքայութիւն քո,  
զոր խոստացար սիրելեաց քոց.  
Եւ զօրացո զսիրտ իմ  
ատել զմեղս եւ սիրել զքեզ միայն եւ առնել զկամս քո.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

**ԺԴ**

Խնամող արարածոց,  
պահեա նշանաւ խաչի քո  
զհոգի եւ զմարմին իմ՝  
ի պատրանաց մեղաց,  
ի փորձութեանց դիւաց,  
Եւ ի մարդոց անիրաւաց,  
Եւ յամենայն վտանգից հոգոյ եւ մարմնոյ.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

**12**

Benevolent Lord, shaper of our will,  
do not abandon me to follow the impulses of my self,  
but guide me always  
to be in accord with the lovingkindness of your will,  
and have mercy upon your creatures  
and upon me with my many sins.

**13**

King of heaven,  
grant me your kingdom  
which you promised to those whom you love.  
And strengthen my heart  
to hate sin and to love only you and do your will,  
and have mercy upon your creatures  
and upon me with my many sins.

**14**

Caregiver of all creatures,  
with the sign of your cross guard my soul and body  
from the snares of sin,  
from the temptations of demons,  
and from unjust people,  
and from all the other perils of the soul and body,  
and have mercy upon your creatures  
and also upon me with my many sins.

**ԺԵ**

Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ  
ի տուէ եւ ի գիշերի.  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել,  
զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս:

**ԺԶ**

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո  
եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով,  
քեզ յանձն առնեմ զանձն իմ.  
Դու հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ  
յայսմիեւտէ մինչեւ յաւիտեան.  
եւ ողորմեա քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս:

**ԺԷ**

Դարձուցիչ մոլորելոց,  
դարձո զիս ի չար սովորութեանց իմոց  
ի բարի սովորութիւն.  
եւ բեւեռեա ի հոգի իմ սոսկալի օր մահուն,  
եւ զերկիւղ գեհեհնոյն, եւ զսէր արքայութեանն.  
զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն.  
եւ ողորմեա քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս:

**15**

Christ, protector of all,  
may your right hand shelter me,  
day and night  
at home and abroad,  
asleep and awake,  
that I may never falter,  
and have mercy upon your creatures  
and also upon me with my many sins.

**16**

My God, who with open hands  
fills all things with your mercy,  
I commit myself to you.  
Care for and provide for the needs of my soul and body  
from this time and evermore,  
and have mercy upon your creatures  
and also upon me with my many sins.

**17**

Retriever of the wayward,  
turn me from my bad habits  
to good ways,  
and nail in my soul the terrible day of my death  
and the fear of hell and the love of the kingdom  
that I may repent my sins and do righteousness,  
and have mercy upon your creatures  
and also upon me with my many sins.

**ԺԸ**

Աղբիւր անմահութեան.  
աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան  
որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ՝  
յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

**ԺԹ**

Պարգեւիչ ողորմութեան,  
պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով,  
Եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբ  
գալ առ քեզ.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

**Ի**

Բարերար Տէր,  
հրեշտակի բարոյ յանձն արասցես զիս՝  
քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ.  
Եւ անխոռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝  
որք են ի ներքոյ երկնից.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

**ԻԱ**

Լոյս ճշմարիտ Քրիստոս,  
արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել  
զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն  
Եւ հանգչել յուսով բարեաց յօթեվանս արդարոց  
մինչեւ յօր մեծի գալստեան քո.  
Եւ ողորմեա քո արարածոց  
Եւ ինձ՝ բազմամեղիս:

**18**

Fountain of immortality,  
make the tears of repentance flow from my heart  
like the prostitute's so that I can wash away the sins from my soul  
before I leave this world,  
and have mercy upon your creatures  
and also upon me with my many sins.

**19**

Granter of mercy,  
endow me with orthodox faith and good works  
and through communion of your body and blood,  
come to me,  
and have mercy on your creatures  
and also upon me with my many sins.

**20**

Beneficent Lord,  
entrust me to the angel of goodness  
that I may sweetly give up my soul to you  
and pass unharmed through the evil of demons  
who are beneath the heavens,  
and have mercy on your creatures  
and also upon me with my many sins.

**21**

True light, Christ,  
make my soul worthy to behold with joy  
the light of your glory on the day of my summons,  
and to find repose in the light of your goodness  
in the lodgings of the just until the great day of your Coming,  
and have mercy on your creatures  
and also upon me with my many sins.

## ԻԲ

Դատաւոր արդար,  
յորժամ գաս փառօք Հօր դատել  
զկենդանիս եւ զմեռեալս՝  
մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում,  
այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն  
եւ լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց՝  
յերկնից արքայութիւնդ.  
    եւ ողորմեա քո արարածոց  
    եւ ինձ՝ բազմամեղիս:

## ԻԳ

Ամենաողորմ Տէր,  
ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ՝  
իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից,  
կենդանեաց եւ մեռելոց.  
Շնորհեա եւ թշնամեաց իմոց  
եւ ատելեաց զթողութիւն որ առ իս յանցանաց.  
եւ դարձո զնոսա ի չարեացն, զոր ունին վասն իմ,  
զի ողորմութեան քում արժանի եղիցին.  
    եւ ողորմեա քո արարածոց  
    եւ ինձ՝ բազմամեղիս:

## 22

Just judge,  
in the hour when you come with the glory of the Father  
to judge the living and the dead,  
do not enter a judgment against your servant  
but save me from the eternal flames,  
And let me hear the blissful call to the righteous  
to your heavenly kingdom,  
    and have mercy upon your creatures  
    and upon me with my many sins.

## 23

All merciful Lord,  
have mercy upon all who believe in you,  
mine own and others, known and unknown,  
living and dead,  
Forgive my enemies and those who hatefully trespass against me,  
and turn them back from the malice they have toward me,  
that they may be worthy of your mercy,  
    and have mercy upon your creatures  
    and upon me with my many sins.



**ԻԴ**

Փառաւորեալ Տէր,  
ընկալ զաղաչանս ծառայի քո՝  
եւ կատարեալ ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ  
սրբուիւոյ Աստուածածնին,  
եւ Յովհաննու Մկրտչին,  
եւ սրբոյն Ստեփանոսի Նախավկային,  
եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին,  
եւ սրբոց առաքելոց եւ մարգարէից,  
եւ վարդապետաց եւ մարտիրոսաց եւ սրբոց հայրապետաց,  
եւ ճգնաւորաց եւ կուսանաց,  
եւ ամենայն սրբոց քոց,  
երկնաւորաց եւ երկրաւորաց.  
եւ քեզ փառք եւ երկրպագութիւն  
անբաժանելի սուրբ Երրորդութեանդ,  
յաւիտեանս յաւիտենից.  
ամէն:

**24**

Glorified Lord,  
receive the prayers of your servant  
and grant my supplications for the good  
through the intercession of the holy Mother of God,  
and John the Baptist,  
and the first martyr St. Stephen,  
and St. Gregory our Illuminator,  
and the holy apostles and prophets,  
holy fathers and martyrs and holy patriarchs,  
and the hermits and nuns,  
and all your saints,  
in heaven and on earth,  
and glory and bowed adoration to you,  
O indivisible holy Trinity,  
unto the ages of ages.  
Amen.